

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ
ՄԻՋՈՅՆԵՐ :

Վարակիչ հիւանդութիւնների նախապաշտպանողական միջոցները (պրոֆիլակտիկան) առողջապահութեան պիտաւոր մասերից մէկն է, որովհետեւ վարակիչ հիւանդութիւնների դէմ նպատակայարմար միջոցներ գործ դնելով յաջող հետեանքներ կարող ենք յուսալ: Յիրաւի որ տեսականապէս (à priori) կարելի է ասել քանի որ այդ հիւանդութիւնների յատկանիշ թոյնների հետ լաւ ծանօթացած լինինք, նոցա ծագման և տարածման եղանակները մի առ մի իսկապէս իմացած լինինք, պէտքէ յուսաւորինք որ մարդկութիւնը հետզհետէ կթելթեւանար և կազատուէր այդ զարհուրելի հարուածներից: Ընդհանրապէս կարելի է ասել որ վարակիչ հիւանդութիւնների դէմ նախապաշտպանողական միջոցներ գործ դնելով աւելի լաւ հետեանքներ կարելի է ստանալ քան թէ մարդկութեան միւս ֆիզիկական նեղութիւնների դէմ: Դժուար է յուսալ որ մի ժամանակ մարդկութիւնը կարելի լինի պահպանել ցրտահար հիւանդութիւններից և ազատել նորան թոքերի կամ թոքամաշկի բորբոքումից և կամ հնար գտնել մարդկներին պաշտպանել սրտի և արիւնադարձման խողովակների հիւանդութիւններից: որովհետեւ այդ հիւանդութիւնները գոնեայ մասամբ առաջանում են ծերութեան պատճառով կազմուածքի բնական փոփոխութիւններից: Ընդհանրապէս հասարակական առողջապահութիւնը չէ կարող բնութեան օրէնքները փոխել և մարդկային ցեղը անմահացնել, այլ նա կարող է զիմէլ միայն մարդկային կեանքի արտաքին պայմանների աւելի կանոնաւոր զարգացման: Իսկ մարդկային կեանքի պայմանները այնքան աւելի կանոնաւոր են ինչքան աւելի է ծերութիւնից առաջացած մահկանացութիւնը, որ ինչպէս յայտնի է առաջանումէ կեանքի ամենակարեւոր գործարանների ծերական (старческий) բնական փոփոխութիւններից: Հասարակական առողջապահութեան գաղափարին բաւականի կմօտենանք եթէ կարողանանք մարդից հեռացնել ոչ թէ պատահական հիւանդութիւնները, որոնք կախումն ունին զանապան անբմբայնելի գործակալներից, այլ այն հիւանդութիւնները, որոնք որոշեալ և անփոփոխ պատճառներ ունին և որոնք առանց այդ պատճառների չեն կարող զգյութիւն ունենալ: — սոքա վարակիչ հիւանդութիւններն են, որոնք շատ նմանութիւն ունին քիմիական գործակալների թունաւորման հետ: Բաւական է միայն հիւանդաբեր թոյնի բազմանալուն ընդդիմանալ և թոյլ չտալ կազմուածքի մէջ մտնելու, որով խնդիրը վճռուած կլինի և մարդկութիւնը կազատուի ամենամեծ չարիքների մէկից:

Ազգերի քաղաքակրթութիւնը փոքր ինչ ազդել է վարակիչ հիւանդութիւնների վերայ: թուլացրել է նոցա զօրութիւնը, այնպէս որ զեռ առողջապահութիւնը գիտութիւնների կարգը չմտած վարակիչ հիւանդութիւնները արդէն սկսել էին կորցնել իւրեանց սաստկութիւնը և պատմու-

Թեան նոր չփնտռում տեսնում ենք որ նորա համեմատարար քիչ զոհեր էին տանում քան թէ միօրին դարերի ժամանակ։ Միւս կողմից միևնոյն քաղաքակրթութեան զ ծանօթացրեց և ուրիշ վարակիչ հիւանդութիւնները հետ և ինչ ծնւոյան ոչ երբէք չէր ծանօթանալ խօլերայի հետ և թէ ճանապարհների հաղորդակցութիւնը չդարձանար վերին աստիճանի։ Բայց միևնոյն քաղաքակրթութիւնը մեզ միջոցներ է տալիս աւելի մօտ ծանօթանալ վարակիչ հիւանդութիւնների հետ և զննել նոցա յատկութիւնները՝ ծագման և տարածման եղանակները և միւս բանիւ նա ծանօթացնում է բնութեան սքողված կեանքի հետ։ Մենք կարող ենք և պէտք է հասկացողարար աշխատենք և նպաստենք քաղաքակրթութեան քանքարաթաղոյց աշխատանքին։ Այդ աշխատանքը զուր չէ առանց հետեանքի չի մնալ և որովհետեւ վարակիչ հիւանդութիւնների շատերից կարելի է խուսափել և հասարակական առողջապահութեան այդ կողմից մարդկութեան տուած մեծ օգուտը երևում է վարակիչ հիւանդութիւններից առաջացած մահահանգութեան թուր փոքրանալուց։ Համարեա բոլոր մեծ քաղաքներում վարակիչ հիւանդութիւններից առաջացած մահահանգութիւնը ընդհանուր մահահանգութեան 20% է կազմում։

Վարակիչ հիւանդութիւնների դէմ գործադրելի առողջապահական միջոցները մեծ կախումն ունին նոցա ծագման և տարածման պայմաններից և ընդհանրապէս նոցա յատկութիւններից և վասն որոյ մենք ևս այժմ կպատմենք ամենահարկաւոր առողջապահական եղանակները որոնք գործ են դրւում թէ վարակիչ կոչողական (փոխադրական) և թէ վարակիչ միազմատիկական կարգի հիւանդութիւնների դէմ։ Ընթերցողը շատ դիւրութեամբ կարող է ընդհանուր առողջապահական ցուցումները յարմարացնել առանձին դէպքերին։

Բ. Վարակիչ կոչողական հիւանդութիւնների նախապաշտպանական միջոցները։

Բոլոր գործադրելի առողջապահական միջոցները վարակիչ կոչողական հիւանդութիւնների դէմ հետեւեալ սկզբունքների վերայ են հիմնուած։

ա. Առողջներին հիւանդներից և կամ նոցա բնակարաններից հեռացնել — հիւանդներին հեռացնելը և առանձնացնելը։

բ. Խուսափել հիւանդարիւթ թոյնի կենդրոնանալուց։

գ. Հիւանդարիւթ թոյնը բնաջնջել — օդի դէզինֆեկցիան։

դ. Թուլացնել դէպի այդ հիւանդութիւնները ունեցած անհատական տրամադրանքութիւնը։

ա. Հիւանդների հեռացնելը և առանձնացնելը։

Վարակիչ հիւանդութիւնով վարակուած հիւանդներին առողջներից հեռացնելը հին ժամանակներում ևս վարակման դէմ իրրեւ նախապաշտպանական միջոց էր գործածուած և բնակիչները երբեմն երկիւղից մինչև

անգամ խիստ էին վարւում թէ հիւանդների և թէ համաճարակումով վարակված երկրների փախուստականների հետ, Շատ տեղերում արգելւում էին հիւանդների իրեղենների գործածութիւնը, մինչև որ նորա լաւ շնորհիւն ջրի մէջ և արեգակի կամ կրակի առաջ լաւ շորացած շիւնէին, Այժմ ևս գործադրւում է հիւանդներին առողջներից բաժանելու միջոցը և յիրաի որ զիւղերում և փոքրիկ քաղաքներում երբեմն յաջողւում է այդ միջոցով հիւանդութեան տարածվիլը սահմանափակել, որովհետև այդ տեղերում բաւականի զիւրին է առժամանակ դադարեցնել վարակված և առողջ տների մէջ եղած հազորդակցութիւնը, Իսկ մեծ քաղաքներում այդ միջոցի գործադրութիւնը դժուար է, նախ որ քաղաքային վարչութեանը շատ չեն յայտնւում հիւանդութեան առաջին դէպքերը և երկրորդ որ թէ հիւանդների և թէ նոցա հետ հազորդակցութիւն ունեցողների վերայ անկարելի է վերահսկողներ նշանակել, երբեմն պատահում է որ հիւանդութեան նոր սկսուած միջոցին ճիշդ յայտնի չեն լինում հիւանդութեան ձևերը կամ յատկութիւնները այժպէս որ հիւանդները կարողանում են բոլոր շուրջ եղողներին վարակել և համաճարակումը տարածել:

Առողջներին հիւանդների բնակարաններից հեռացնելը բաւականի լաւ հնաւանքներ է տալիս, վասն որոյ երբ մի տան մէջ յայտնւում է վարակիչ կաշողական հիւանդութիւններից մէկը, այն ժամանակ հարկաւոր է հեռացնել բոլոր առողջներին մանաւանդ երեխաներին, թողնելով հիւանդների մօտ միայն նոցա խնամատարներին (հիւանդապահներին):

Բ. ԷԼԻՄԻՆԱԿՆԵՐ ԼՈՅՆԻ ԿԵՆՏՐՈՆԱՆԱԼՈՅ ԽՈՒՍԱՒԵԼՆ:

Բնակարաններում հիւանդաբեր թոյնի կենդրոնանալու դէմ գործածուած միջոցները յիշաւի լաւ հնաւանքներ են տալիս, այդ պատճառով պէտք է մեծ ուշադրութիւն դարձնել բնակարանների ընդարձակութեան և օդի մաքրութեան վերայ, Վարակուելու համար բաւական է որ հիւանդաբեր թոյնի մի նշանաւոր շտիբը ներգործի, այդ նշանաւոր շտիբը ի հարկէ զանազան է նայելով նախ վարակիչ հիւանդութեան տեսակին և երկրորդ անհատի դէպի այդ հիւանդութիւնները ունեցած տրամադրութեանը, վասն որոյ և բնակիչներով չի վատ հոգմահարուած բնակարաններում վարակիչ կաշողական հիւանդութիւնների թոյնները սաստիկ խտանալով պիտի որ սաստիկ արագութեամբ տարածուին, վարակելով բոլոր շուրջ, եղողներին: Արեւմն պէտք է աշխատել որքան կարելի է հիւանդաբեր թոյնի կենդրոնանալուց զգուշանալ, Այդ պատճառով բժիշկներից շատերը չէին ընդունում որ հիւանդանոցներում վարակիչ կաշողական հիւանդութեամբ վարակուածներին պէտք է բաժանել հիւանդանոցում եղած միւս հիւանդներից, ենթադրելով որ վարակումը աւելի արագ է տարածւում և թոյնը այն ժամանակ է աւելի սաստիկ ներգործում, երբ վարակուած հիւանդները առանձին սենեակներում են տեղաւորուած, քան թէ այն ժամանակ երբ նորա

ցրուած են ընդհանուր սենեակներում: Վարմուէի ժամանակ կարմրուկով հիւանդները կարող են միւս հիւանդների ընդհանուր սենեակների մէջ տեղաւորուել: որովհետեւ ինքն ըստ ինքեան կարմրուկը թեթեւ վարակիչ կրող չողովան հիւանդութիւններին է պատկանում: բայց շագագոյն կարմրուկը (скарлатина — քուժէշ), ծաղիկը, բժաւոր տիֆը (сыпной тиф), զիֆտերիտը, որոնք սաստիկ վարակիչ յատկութիւն ունին և ծանր տկարութիւններ են, ուրեմն շատ անզգոյշ վստահութիւն է այդ հիւանդութիւններով վարակուածներին հիւանդանոցի ընդհանուր սենեակներում ցրուել և միւս հիւանդներին ևս ի զուր վարակման երկիւղի ենթարկել: Վասն որոյ վարակիչ կպչողական հիւանդութեամբ բռնուածներին անշուշտ հարկաւոր է առանձին սենեակներում և մինչև անգամ առանձին բնակարաններում պահել, այդ սենեակների մեծութիւնը այնքան միայն պիտի լինի, որ կարողանայ բաւականութիւն տալ մի կամ երկու հիւանդի: Վարակուած հիւանդների համար պէտքէ առանձին հիւանդատոհայ խնամակալներ նշանակել: որոնք հաղորդակցութիւն պէտքէ չունենան, միւս հիւանդապահների հետ: Լաւ է եթէ կարելի լինէր հիւանդներին առանձին շինութիւններում, բնակարաններում և այլն . . . տեղաւորել: Պէտքէ ուշադրութիւն դարձնել որ բնակարանները շատ լցուած չլինեն հիւանդներով, բաւականաչափ հոգմահարուած լինին. իւրաքանչիւր վարակուած հիւանդի համար հարկաւոր է մինչև 60—70 խորանարդ մետր *) տարածութիւն և իւրաքանչիւր ժամում 100—150 խորանարդ մետր հոգմահարուած (մաքուր) օդ:

Մասնաւոր տներում հիւանդաբեր թոյնի կենդրոնանալու հեռացնելն աւելի կարեւոր է քան թէ հիւանդանոցներում: որովհետեւ մասնաւոր տները աւելի են վարակիչ հիւանդութիւնների տարածման աղբիւր դառնում: Աւելի երկիւղալի են ոչ թէ հարուստների լայն ընդարձակ լաւ հոգմահարուած բնակարանները այլ աղքատ մշակ դասի բնակարանները: Բըժաւոր տիֆի հիւանդաբեր սկզբունքը աւելի մեծ ներդործութիւն ունի այդ կեդրոն չքաւոր բնակիչներով լի խորշերում, որոնց օդը այնքան ծանր է և հեղձուցիկ որ անտոյժոր մարդը այդ խորշերը մտնելով թոյլանում է և վատ է զգում իւրեան: Այդ տեղերում հիւանդաբեր թոյնների կենդրոնանալը վերին աստիճանի է հասնում և յիրաւի ամենին յայտնի է որ իւրաքանչիւր համաճարակման ժամանակ դոցա բնակիչները հիւանդանումեն ահադին բազմութեամբ: Անկասկածելի է որ այդ տեղերին է հարկաւոր օգնութիւն և այդ տեղերում վարակիչ հիւանդութիւնների նախադաշտապնդական (պրոֆիլակտիկական) և ընդհանուր առողջապահական միջոցները կարող են բաւական զգալի օգուտներ տալ: Վարակիչ հիւանդութիւնների դէմ աւելի իսկական և հիմնաւոր միջոցներն են—մշակ մարդու և ընդհանրապէս չքաւորների համար նպատեկայարմար, լաւ բնակա-

*) Ին խորանարդ մետր հաւասար ուռւտոց է համարեա 27/10 խորանարդ արշինին:

րաններ շինել և բոլորովին ոչնչացնել այն խորշերը, որոնք իւրաքանչիւր համաճարակումի ժամանակ վարակման բոյն և նորա տարածման գլխաւոր աղբիւր են դառնում:

Գ. Տ. Գ.

(Աշխարհագիր):

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ:

Ա. Պօլսի ազնիւ Հայուհիների Ազգանուէր Անկերութիւնը ազգային դատարարական նուիրական և վսեմ նպատակով հիմնվելով, իւրեանց ձեռնարկութեան սկզբում իրաւամբ ցանկացել են մեր ազգային Հայրապետի օրհնութիւնն իւրեանց աջակից ունենալ: Ուստի զիմեցին յետադաջ գրութեամբ առ Ա.Ե.Հ. Հայրապետ:

ԱՌՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ԳԵՈՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ԵՒ ԱՌԱՔԵԼԱՅԱԶՈՐԻ ՀԱՅՐԱՊԵՏ ՏԱՆՆ ՍՐԲՈՅ ԷԶԿԵԼԵՆԻ:

Ա.Ե.Հ.ափառ Ս. Հայրապետ,

Գարբ որ զՀայուն կրեն զկնիք դատապարտութեան, և ամբ որ բռնաւորեալ յարտասուս և ի հառաչանս Հայաստանի թաւալին յանդունդս անցելոյն, ի զարմանս հարեալ կան ի տեսիլ Արփինւոյն, որ ի գերակառոյց Տանէ Սրբոյն Էջմիածնի ծագելով սփո ի ընդ ամենայն սահմանս Հայաստանի, և ճակատք խաւարամածք վերամբառնան ի գեղեցիկ լոյսն փրկութեան, որ ի նուիրական դահլից Ա.Ե.Հ.ափառ Սրբազնութեանդ թուուցեալ հասանէ յաւերակունս Հայրենեաց, յորոց Հայուհիքս թէպէտ հեռի և նժդհ, այլ մերձ հոգւով և արեամբ շլացեալ կամք ի նշուից մեծութեան Ա.Ե.Հ. Հօրդ և առաքինւոյ, և թէպէտ իղձ յայտարարութեան խորին մեծարանաց մերոց ի բազմաց հետէ ունէր զսիրտս համայնից, այլ շիշխեաք ցարդ բառնալ ձայն առ Ա.Ե.Հ.ափառ Սրբազնութիւնդ, որոյ բարբառ հայրական կշտամբելոց էր անշուշտ զդատարկութիւն մեր և զանգործութիւն, յորս թաղեալ մնայաք յուսահատ զկնի դարուց բազմաց: Այլ զարդիս որ թութափեալ զլուծ բռնութեան յոր զմեզ կաշկանդէր տգիտութիւն, ձեռնամուխ եղաք յօժանդակութիւն փրկութեան Հայրենեաց, սակաւ իմն արժանաւոր զանձինս վարկանիմք յայտ առնելոյ զմեծարանս Հայուհեացս խոնարհաբար, որոց սիրտք ճշմարիտ յիշատակարանք են փառապանծ անուանդ և անմահի:

Ձեն մեր զափնիք ի պսակ Ա.Ե.Հ. Հօրդ ճակատուն, չեն մեր ծագկունք ի կոխան օտիցդ յաղթանակից և ոչ քնարք ի հիւսել տաղս զմեծագործութենէդ, այլ որ ինչ արժան թուէր փառաց զիւցազանց անցելոց, որ ինչ պսակէր զլուսն Հռոմուլայ և Աղեքսանդրի, ոչինչ է օրէն ընծայել ան-